

4887

ԿՈՄՅԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՈՒՇՔ ԴԱՐՁՐԵՔ
ԶԵՐ ԱԽԱՍԻՆԵՐԵՆ

Թարգմ. ռուս.

636
NL-85

Պետական Հանուրականըթյուն. Յերևան—1928

26 AUG 2013

636
PL-85

24 SEP 2010

ԿՈՄՅԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՈՒՇՔ ԴԱՐՁՐԵՔ

— ԶԵՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ —

1003
11167

Թարգմ. ռուս.

1882

1882



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ.— ՏԵՐԵՎՈՂ. 1928

ԳԻՏԵ՞Ք, ԹԵ; ԿՈՎԸ ԻՆՉՔԱՆ ԿԵՐ Ե ՈՒՏՈՒՄ
ՅԵՎ, ԳՐԱ, ԳԻՄՍՅՑԸ ԻՆՉՔԱՆ ԿԱԹ Ե ՏԱԼԻՍ

Հասկա մի հաշիվը պահե՛ք

Ամենքն ել անասունին կեր են տալիս. խցկում
են անասունի բերանը գարման, խոռ և զանա-
դան կեր, բայց շատ քչերն են մտածում, թե եղ
կերի գիմաց անասունի տված կաթը, ճրագուն կամ
միսը ձեռնոտու յե, թե չե, հաշիվը չեն պահում,
վոր իմանան, թե վոր անասունի (կովի, վոչխա-
րի, խոզի կամ թռչունի) վոր տեսակը իրեն կե-
րածի գիմաց ավելի շատ ոգուտ ե տալիս:

Շատ քչերն են հաշիվը պահում, բայց եղ բա-
նը շատ կարևոր ե. արդյոք կովը ոգուտ ե տա-
լիս, թե վկաս, կամ ինչ անասուն պահեն ե տ-
մենից ոգուտվեար:

Հաշիվը պահելը դժվար գործ չի, բայց շատ
մեծ ոգուտ ե տալիս: Եղ բանն անելու համար
պետք ե համբերություն ունենալ և որ որի վրա
զրի առնել:

Սկսեք կովից. հաշիվ արեք, թե կովը տարե-
կան ի՞նչքան կաթ ե տալիս:

Հաշիվը եսպես կարելի յե պահել:

Սովորաբար կաթը կթում են միենում ամանի—կովկիթի մեջ: Վերցրեք մի շիշ ջուր, լցրեք եղ ջուրը կովկիթի մեջ և կովկիթի ներսի կողմից նշան արեք, թե ջուրը մինչև վորաեղ հասավ: Հետո մի շիշ ել ջուր ափելացրեք ու ելի նշան արեք: Եղակս նշաններ անելով, ենքան շիշ ջուր լցրեք, մինչև կովկիթը լցվի:

Եղափսով ձեր կովկիթը, ինչպես ասում են, աստիճանների կրաժանալի: Ամելի լով կլինի, յեթե ջուրը վերցնեք վոչ թե շաբով, այլ կես շաբով և ենպես նշաններ անեք: Յածից սկսած, ամեն մի նշանի վրա 1, 2, 3 և այն թվեր գրեք, կամ խաղ քաշեք:

Ասենք թե, ձեր մարը կովը կթել ե: Դուք մոտենում եք կովկիթին և անմիջապես տեսնում եք, թե կաթը մինչև վոր խազը կամ վոր թիվն ե հասել: Յեթե մինչև յերրորդ խազն ե հասել, ուրեմն նշանակում ե, վոր կովը մի անդամ կթելումը տվել ե յերեք շիշ կաթ:

Եղակս ել ահա դուք կիմանաք, թե կովը ինչքան կաթ ե տալիս:

Ամեն մի կթելուց հետո ուղղակի գրեք, թե կթը ինչքան եր:

Կարելի յե կթը եսպես ել հաշվեր: Եշով կամ կես շառվ չափեք են բոլոր բուղները կամ աման-

ները, վորոնց մեջ կաթը լցնում եք: Հենց վոր կթած կաթը կցնեն ամանների մեջ, գուք ել անմիջապես հաշվեք և նշանակեցեք, թե քանի շիշ ե կթված:

Ամեն մի ամսի վերջին հաշիվ արեք, թե ամսը վա մեջ կովը ինչքան կաթ ե տվել: Դուք շատ հետաքրքիր թվեր կստանաք, մանավանդ յեթե գյուղում միքանի կովերի տված կաթի հաշիվն արվի:

Բայց գե կիթը իմանալով գեռ գործը չի վերջնաւ: Մեկը կարող է իրեն կովին լավ կերտալ, մի ուրիշ—վատ: Կովի տված կաթն ել շատ կամ քիչ կլինի: Պետք է գեռ համեմատեր թե ով ինչ կեր է տալիս իր կովին: Հիմա յել սկսեք կերի հաշիվը պահել:

Ես դորձն ել շատ մի դժվար բան չի:

Սովորաբար կովին կեր են տալիս կամ կողովով (քթոց), կամ հենց խտիսով: Մի կշեռք ճարեք, կամ մի բեզմեն, և կշռեք ինացեք, թե են կորովը, վորով կովին կեր եք տալիս, ինչքան խստ, ինչքան դարձան կամ ինչքան փափուկ կեր և տանում: Կերը կողովի մեջ շատ միք հուալ տա, վոչ ել շատ թույլ լցրեք, այլ ենպես, ինչպես սովորաբար միշտ լցնում եք: Նմանապես և կշռեք մի խտիս դարձանը ու մի խտիս խոտը և աշխատեցեք վարժվել, վոր ձեր խտիսները միշտ իրար հավասար լինեն:

Եղալիսով ել ահա գուք կիմանաք, թե կովին
ինչքան կեր եք տալիս:

Ինչքան կեր վոր տալիս եք, ամեն անզամ ելի
գըեք և ամսի վերջին ելի հաշիվ արեք: Հաշիվ
վոր անեք, տեղեկացեք, թե քանիսով ե ծախ-
փում կաթը, և քանիսով ե ծախփում են կերը,
վոր կովը կերել ե: Եղ գներով ել հետո հաշիվ
արեք, թե կովը քանի մանեթի և քանի կոպեկի
կեր և կերել և քանի մանեթի ու կոպեկի կաթ
և տվել: Դուք հետաքրքիր թվեր կստանաք:

Բայց դե մի ամսվա հաշիվներով դատել չե
կարելի: Կարող ե պատահել, վոր եղ ամսվա
հենց են ժամանակն ե, վոր չեկող ամսին կովը
պիտի ճնի: Կովը եղ ժամանակներին կաթ չե
տալիս, դա նրա համար պակասություն չի: Պետք
է վերցնել վոչ թե մի ամս, այլ ամբողջ տարին:
Եղակն ել պետք ե հաշիվ անել, թե ամբողջ տարին
կովի պահելը ինչքան ե նստել, և ինչքան կաթ և
տվել կովը: Կովից ստացած յեկամուտի վրա պետք
է ավելացնել նաև նոր ծնված հորթի արժեքը:

ԴՈՒ ԼՎԱՅՎԱՐԻՄ ԵՍ: ԻՄԿ ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ
ԿՈՎՆ ՈՒ ԶԻՆ ՄԱՔՈՒԲ ԶՊԻՏԻ ԼԻՆԵՆ

Դու փորձով գիտես, թե ինչքան վաս ե լի-
նում, յեթե յերկար ժամանակ վոչ լողանում ես
և վոչ ել լվացվում:

Ճիշտ ե, չե, ամբողջ ձարձինդ գոր ե գալիս,
մըմնջում ե, չես կարողանում հանգիստ գաս սո-
վորել, լավ չես քնում, մի խոսքով՝ ինքդ քեզ մի
տեսակ լավ չես զգաւմ:

Իսկ ինչքան լավ ե լինում լողանալուց հետո
տանը կամ ամառը գետում:

Ասենք թե ձին, կովը կամ խոզը, ճիշտ ե, գիրք
ու լրազիր չեն կարդում, բայց դե ինչքան ել
վոր չինի, նրանք ել են ուզում մաքուր լինել:
Ուշը դարձրու. այ ձին նոտած տեղից վերկա-
ցավ և իսկուն թափ տվեց վրեն կպած կեղար,
փոշին: Այ, ենտեղ ել շուն եր թափալվում ձյան
մեջ, վերկացավ, ձյունը վրայից թափ տվեց, իսկ
ձյան հետ ել՝ մազերին կպած փոշին, կեղար: Ահա և
խոզը. ինչքան ել վոր խոզը համարվում ե ամե-
նակեղառա կենդանին, խրվել ե ցեխի մեջ: Կար-
ծում ես, վոր եղ բանը նա արել ե, վորովհետեւ

նա անմաքրասեր ե: Ամեննեին, ցեխը չորացել,
կպել ե. կաշվին, «խոզը խոզավարի» ման ե գա-
լիս, բայց մեկ ել տեսնում ես, վոր մոտեցավ մի
անկյունի և սկսեց պինդ քորել մարմինը, ենավես
պինդ, վոր ցեխի չորացած կտորները թափվում
են, իսկ եղ կտորների հետ ել թափվում են կաշ-
վի վրա հավաքված միջատները, ճարպոս քրտին-
քը, թեփը և այն:

Ուշք գարձրու ուրիշ կենդանիների վրա,—կո-
վի, վոչխարի, հավի, կատվի, վայրենի գաղան-
ների և թռչունների ու կնկատես, թե ինչպես
նրանք բոլորը աշխատում են մաքուր լինել:

Բայց բոլորն իրանց եղ սեփական «լողանարն
ու լվացվելը» անալին կենդանիների համար բա-
վական չի: Մարդը պետք է անպայման ինքն եղ
կենդանիներին մաքրի:

Շատերը կզարմանան, թե ել ի՞նչ մաքրել,
նրանք առանց են ել սովոր են կեղափի: Ո՞վ ե
տեսել մինչև հիմա, վոր անասունին մաքրեն:

Եղ ձիշտ չե: Յեթե կենդանիները կեղտոտ են
ապրում, եղ չի նշանակում, թե եղ կեղտոտ լի-
նելը լավ բան ե. և ահա թե ինչու:

Կաշին մի հասարակ ծածկոց չի, վոր քաշել են
կենդանիների մսի վրա, թե ի՞նչ ե մինը ցըիվ
չգա: Կաշվի միջոցով ել ենավիսի շնչառություն և
կատարվում, ինչպես վոր քթի ու բերնի միջո-

ցով: Յեթե կաշվի վրա լաք քսենք, վորը չի
թողնում վոր իր միջով ող անցնի, ապա եղ
դեպքում մարդը կամ կենդանին շնչապատռ
կլինեն, թեկուղ ինչքան ել ուժեղ կերպով աշ-
խատեն նրանք բերնի և քթի միջոցով թոքերով
շունչ քաշել:

Կաշվի միջոցով արյունը թարմանում ե, կաշվի
միջոցով գուրս են գալիս մարմնի ամեն աեսակ
մնացորդները, ավելորդ ջուրը և քրտինքը:

Ինչպես տեսնում եք, կաշին շատ կարեոր
նշանակություն ունի: Դրա համար ել կաշվի
մեջ իղած բոլոր անցքերը (ծակոտիները) պետք
է մաքուր լինեն: Յեթե կաշին չմաքրենք, են
ժամանակ եղ ծակոտիները կկեղսուցին և կլըց-
վին փոշով, ցեխով, կաշվի ճարպով, քրտնքով
և հին փչացած կաշվի մնացորդներով (թեփով):
Դրանից արյունը լավ չի թարմանա, կաշվի մի-
ջոցով մարմնից բաժանվող մասերը գուրս գալու
աեղ չեն գանի, կմնան մարմնի մեջ և կարող են
հիվանդություններ առաջ բերել: Կեղափի մեջ
կենդանիները անհանգիստ են լինում, շուտ-շուտ
քորում են իրենց, եղ շարժողության համար ի-
զուր տեղը ուժ են կորցնում (իսկ ուժը ստաց-
վում է կերից) և ավելի վատ են աշխատում:

Կաշին վոր մաքրում ես, արյունը սկսում է
հոսել դեպի կաշին, իսկ դա շատ ոգտակար եւ:

Մաքուր կենդանին ավելի առողջ, ավելի ժիր և ավելի սիրուն և լինում:

Կանոն պետք ե դարձնել և շուտ-շուտ, ավելի լավ և ամեն որ, մաքրել կենդանուն: Դրա վրա ժամանակ շատ չի գնա, իսկ զբանից ոգուած շատ կինու:

Մաքրելու համար հարկավոր ե մի փունջ ծղոս և մի լոթի կառը, իսկ ավելի լավ ե, չեթե հայրդ մի խողանակ և մի բրիչ առնի, մի բան վոր թանգ ել չեն:

Մաքրելու գործը գուրսը՝ բաց ողումն արեք, վոր փոշին չսասի ցանքարի կամ գոմի հասակի վրա: Կերը տալու ժամանակ չմաքրեք, — վասակար ե: Մաքրեցեք կամ կերը տալուց առաջ, կամ կերը տալուց մի յերկու ժամ հետո: Մաքրեցեք բրդի ուղղությամբ և հակասակը: Մենակ թե զգուց յեղեք, խողանակով, քերիչով կամ ծղոտի կեմով գունչն ու աչքերի մոտերքը չմաքրեք, վոր չլինի թե մես հասցնեք: Նմանապես չի կարելի քերիչով մաքրել վզից վերի և վորքերը՝ ճնկներից ներքեւ:

Կենդանու մարմնին կպած ցեխն ու թրիքը առաջ քերիչով մաքրեք, նոր հետո ծղոտի կեմով: Յեթե ցեխն ու թրիքը կպել են բաշին, պոշին կամ վոտքերի ներքեկի մասին, եղ ժամանակ՝ առաջ ձեռքով պոկեք կեղար, հետո նոր խողանակը մաքրեք, մենակ թե միշտ խողանակը վերի վից ներքեւ քսեք:

Խողանակով, քերիչով կոս կեմով մաքրելուց հետո, վաս չի լինի, վոր կենդանու ամերող մորմինը շորի կտորով լավ շփեք:

Կենդանիներին եսպես խնամեցեք և կահանեք, թէ նրանք ինչ կդանան:

Աւել դաշտեմ միբավեներին

Զաւո ժամանակ շուտ-շուտ ենքան աղբ և սառչում-կպչում մմբակներին, վոր կենդանին լավ չի կարողանում ման գալ, անհարմար ե զգումիրեն, և վոտքերը իրար են քափում-արորփում: Զգուշ կերպով եղ սառած աղբը պոկեք, վոչ թե մենակ ձիու վոտքերից, աղե նմանապես կովերի: Խորքերի և վոչխարների վոտքերից:

Յամբար պետք ե մատուր լինի

Զին մեծ մասամբ վոտքի վրա կանգնած ե, բայց գե նա յել մեկ-մեկ ուղում և նստել-պառկել, յեթե վոր ցանքարը մաքուր ե լինում: Յամբարը մաքուր պետք ե լինի բոլոր կենդանիների համար, նույնպես և խողերի համար: Տեղի յեղավ, ասեմ: միք մոռանա, վոր խողը մաքրասեր կենդանի յե, եղ մարդիկ են, վոր նրան «խողագարի» յեն պահում:

Յամբարը միշտ շատ փոեք, վոր ներքեմից ցուրտը չտա, թե չի կենդանուն կարող եք մըսացնել:

ԵԼԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ՊՈՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ Տայությունը պահեմ

Ցուրտ ժամանակ մարդ ավելի շատ և ուսումնական է, չե՞:

Դե գա հասկանալի լե, մնունդը մարմնին տաքությունն է տալիս. տաքանալու համար հարկադիր է ավելի շատ ուտել:

Մարմնի տաքությունը պահելու համար կենդանիներն ել աշխատում են շատ ուտել. Յեզի ինչքան վոր ավելի ցուրտ ե, ենքան ել կենդանիները ավելի շատ են ուտում:

Ես ձեռնտու բան ե: Վոչ, իհարկե ձեռնտու չե: Զեռնտուն են ե, վոր կերը կենդանու մարմնին վոչ թե տաքություն տա, այլ կենդանու միսը, ճարալը կամ կաթը ավելացնի:

Իսկ ել ի՞նչպես կարող ե կերը եդ մթերքները ավելացնել յերբ վոր ամենից առաջ կերը պետք ե կենդանու մարմնինը տաքացնի:

Չե, ցուրտ տեղում եղափիսի բան չի կարող լինել:

Այ, հենց եդ է պատճառը, վոր ցուրտ տեղում

կենդանին լով չի չափանում, կավերը ավելի քիչ կաթ են տալիս և շուշ-շուտ ել մրսեցնում են իրենց:

Անասունին ցուրտ տեղում պահելը տիրոջը վաս ե: Ճիշտ են ասում, թե՝ գոմիդ ծակերը կալի, թե չե կաթը կփափչի:

Գոմը ման յեկեք և լավ տնտղեք, ծակ-ծուկ չլինի, մի վորեւ տեղից քամի չփչի: Բոլոր ծակերը փակեք, վոր գոմը տաք լինի, մենակ թե տոթ չլինի: Տոթն ել ցրտի նման վնասակար է:

Բայց տաքության յետեկց ընկնելով չի կարելի մոռանալ...

Լուսի մտախին

Մութ գոմի մեջ անասունը կսրտնեղի, իսկ եղբանը վաս ե. և վաս ե նրա համար, վոր անասունը չի մսակալի, չի յեղակալի, կաթը չի ավելանա: Բացի դրանից ել առանց լուսի անասունի արյունը գույնը կզցի:

Դուք ուշք դարձրել եք, թե կարտոֆիլը կամ մի ուրիշ բույս մութ տեղումը ինչպես է ծլում: Թուզը, գույնը դցած, թառանած:

Իսկ լուս տփեք, — և տեսեք, թե բույսը ինչպես է փոխվում, պայծառ դեղին գույն ստանում, պնդվում:

Արեի լույսն ել կենդանիների համար նույն
բանն եւ:

Են բոլոր գոներում, վորածեղ անասուններ եք
պահում, գոնե մի փոքրիկ լուսամուտ բաց արեք
և ապակի զցեք: Յեթե ապակի չեք գտնի, թող
առանց ապակու լինի, մենակ թե եղ ժամանակ
ուշը դարձրեք, վոր լուսամուտը են կողմիցը բաց
անեք, վոր կողմից վոր քանին շատ ուժեղ չի
փչի:

Յեթե դուք ինքներդ մենակ չեք կարողանա
լուսամուտ բաց անել, խնդրեք մեծերից մեկն
մեկն, թող ձեզ ոգնեն:

Իսկ հիմա խոսենի՛ կերը տալու մասին

Մեզմանում սովորաբար ի՞նչպէս են կեր տալիս
անասուննին:

Այ, եսպես, մի խախտ դարձան, խոս կամ
փափուկ կեր են բերում, զցում բակի մեջան-
դը, —ով վոր ուզում ե, թող մոտ դա ուտի:

Ամեն կողմից վրա յեն թափվում վոչխար,
հորթ, կով, ձի, խոզն ել դեռ են կողմիցն ե ներս
խցկում, —և սկավում ե կերը: Բայց դե ով վոր
աչքաբաց ե ու զոչաղ, նա յե լավ ուտում, իսկ
մյուսները, ինչ վոր մնում ե, նրանով են բավա-
կանանում: Բոլորն ել աշխատում են մանել շեղ
տված կերի մեջտեղը, կերը տրորում են, վորի

տակ տալիս. ճիշտ ե, կերը շատ ե, բայց դե ո-
գուսը քիչ ե:

Զարուհնալի չի, վոր շատ ժամանակ կերի յե-
րեք մասից մեկը վոտքերի տակ փշանում՝ կոր-
չում ե, եդ կնշանակի, վոր յեթե կերը կանանա-
վոր տրվի, եդ նույն կերով կարելի յե կշացնել
վոչ թե յերկու կով, այ յերեք կով, վոչ թե վեց
վոչխար, այ իննը վոչխար:

Նշանակում ե, վոր կերը տալու ժամանակ,
ամենից առաջ պետք ե աշխատել — կերը գեանին
չցցել, այ կերը տալ մսուրմերի մեջ: Կովի հա-
մար ջոկ մսուրք շինեք, վոչխարների համար ջոկ,
ձիու համար՝ ջոկ, վոր վոչվոք վոչվոքի չխան-
գարի:

Զկարտած ծղոտ (բերում) չի կարելի տալ:
Անասունը ավելի վաս կլորուծա և շատ ել ուժ
գործ կինի լավ ժամելու համար: Ավելի լավ ե՝
ծղոտը կտրտել և նոր տալ, կովերի և վոչխար-
ների համար պետք ե կտրտել մոտ մի վերշոկ
յերկարությամբ, իսկ ձիերի համար — կես վերշոկ:

Շատ ժամանակ կովերին ալյուրը կամ քուսպը
տալիս են ջրախան: Եղ սիսալ ե: Ալյուրը կամ
քուսպը պետք ե տալ մաքուր, մի թեթե թրջած,
վոր փոշի չգառնա: Կարելի յե դրանց հետ խառ-
նել միքիչ դարձան, կամ թե չե կոտորած բա-
րուկ կամ կարտոֆիլ: Նմանապես չարժի ուժեղ

կերը՝ ալլուրը, քուսապը և գարին շաղ տալ գար-
մանի վրա և ենափես տալ, ուժեղ կերը պետք է
առանձին տալ:

Շատ ոգտակար է կերի հետ միքիչ աղ խառ-
նելը: Անօտանը եղ ժամանակ ավելի ախորժա-
կով կուտի տված կերը:

1003
ՀՀՀ

Ի՞նչՊԵՍ ՊԵՏՔ Ե; ԼԱՎ. ՀՈՐԹ ՄԵԾԱՅՆԵԼ

Ինչո՞ւ հորթերը շատ են փշանում

Հորթը միքանի որ գեռ չապրած, տեսնում եռ
լուծ և ընկնում, և մեկ ել են եռ խմանում, վոր
վորքերը մեկնեց: Եռ բանը շատ շուտ-շուտ է
պատահում:

Ինչիցն ե սա: Ի՞նչպես պետք է պահպանել
փոքրիկ, զվարձալի հորթուկին, վոր չիչանա:

Հորթի ստամոքսը միշտ ել կարող է շատ ավե-
լի կեր տանել, քան թե ինչքան վոր պետք է
նրան տպրելու համար, և ինչքան վոր նա կարող
է մարսել: Հորթի ախսրժակը միշտ ել մեծ և լի-
նում, բայց ստամոքսը գեռես թուլ է:

Յեթե հորթին թողնես կերի մոտ, նա ենքան
կուտի, վոր ստամոքսը ել ուժ չի ունենա եղքան
կերածը մարսելու, կթուլանա, և հորթը լուծ
կընկնի, իսկ շուտ-շուտ լուծ ընկնելը հորթին
կմահացնի:

Այ, մեր գյուղերում հենց եղակես են կերա-
կրում:

Ասում են՝ թող, ինչքան քեփը ուզում է, ու-
տի, ուժ կհավաքի:

Յեզ ուժ հավաքելու տեղակ, հորթը հիվանդություն և «հավաքում»:

Ուրեմն ինչքան կեր պետք է տալ հորթին, և ինչպես պետք է տալ: Յեկեք եղ մասին խոսենք, կարդացողներն ել թող ուշադիր լինեն:

Վոչ մի ժամանակ հորթին չպետք է ուսեցնել ենքան, ինչքան քեփն ուզում է, — սա առաջին հիմնական կանոնն է: Ավելի լով և քիչ կերակրել, քան թե շատ կերակրել:

Հենց վոր հորթը ծնվեց, չպետք է շտապել ու անմիջապես խմելու բան տալ: Մինչև հորթի աշխարհ գալուց հետո մի 10—12 ժամ չանցնի, նրան վոչ մի բան չի կարելի տալ: Եղքան ժամանակ վոր անցավ, նոր մենակ կարելի յէ նրան միքիչ նոր կիթած կաթ տալ, վոր խօֆի: Առվորաբար առաջին մեկ-յերկու որը հորթին կես կուշտ-կես քաղցած պետք է պահել: Դրանից վնաս չի հասնի:

Ծնվելու առաջին որը հորթին տալիս են մեկ շիշ կաթից վոչ ավելի, իսկ յերկրորդ որը՝ յերկու շիշ վոչ ավելի: Եղ ել տալիս են վոչ թե միւսնգամից, այլ 4—5 անգամում: Առաջին շաբաթվա մեջ որական 4 անգամից պակաս չպետք է խմեցնել կաթը, իսկ հետո կարելի յէ կամաց կամաց անցնել յերեք անգամվա:

Առաջին 10—14 որումը բացի անարատ (յե-

րեսը չքաշած) կաթից ուրիշ վոչ մի բան չի կարելի առլ: Կաթի հետ վոչ կարելի յէ ջուր խառնել, վոչ ել ալյուր:

Կաթը անպատճառ գոլ (տաք) պետք է լինի: Դրա համար ել ավելի լավ է կովին որական 3—4 անգամ կիթել, վորպեսզի կաթը դեռ չսառած աեղնուաեղը արվի հորթին:

Վրա յերրորդ որը ու նրանից հետո յել կաթի չափը կամաց-կամաց ավելանում է ձուավորապես են հաշվով, վոր 3—4 որումը մի շիշ ավելանա: Եղալիսով արդեն յերկրորդ շաբաթվա վերջին հորթը որական 5—6 շիշ կաթ կատանա:

Ուշեմն, առաջին յերկու շաբրումը հորթը վոչ մի բան չի ստանում, բացի նոր կրսիծ սահսրամի կարից (կաթը յեռացնել, ինարկե, պետք չի):

Յերրորդ շաբթվանից սկսած նոր հորթին կամաց-կամաց պետք է սովորցնել խոտի: Խոտին չափ դնելու կարիք չկա, վորովհետեւ առանց են ել հորթը շատ խոտ չի ուտի:

Յերրորդ շաբթումն ել հորթը ելի անարատ կաթով պիտի կերակրվի, և կաթն ել կամաց-կամաց պետք է ավելացվի: Իսկ յեթե կաթը քիչ մինի, են ժամանակ կարելի յէ սկսել յերեսը քաշած կաթ տալ:

Եղ բանը եսովես և արվում: Յերրորդ շաբթվա վերջին սկսում են կամաց-կամաց յերեսը չքաշած

նոր կթած կաթին առաջին որը մեկ բաժակ յերեսը քաշած կաթ խառնել, յերկրորդ որը՝ յերկու բաժակ, հետո—յերեք բաժակ, չորս բաժակ և ավել: Յերեսը քաշած կաթին ել պետք ե թարմը լինի, յեռացրած, հետո նոր հոփացրած:

Մի 4—5 որից հետո նոր կարելի յե որական մի շիշ անարատ կաթը փոխել մի շիշ յերեսը քաշած կաթով: Բայց վորովհետեւ յերեսը քաշած կաթը հնչքան մննդարար չի, ինչքան անարատ կաթը, դրա համար ել են ամանի մեջ, վոր կաթ եք տալիս, պետք ե ածեք վարսակի ալյուր, կամ կտավհատի քուսպ, կամ թե չե զարու ալյուր: Ամեն մի շիշ յերեսը քաշած կաթին պետք ե ավելացնել մի քառորդ փունտ մազած մաքուր վարսակի կամ զարու ալյուր, կամ թե չե մի գդալ կտավհատի քուսպ:

Վատ չի լինի, վոր գարին կամ քուսպը տառց առաջ մեռման ջրով վողողեք:

Վրա վեցերորդ շաբթումը հորթը արդեն ուստում ե մենակ յերեսը քաշած կաթ, ալյուր կամ քուսպ ու խոտ:

Դրանից հետո արդեն յերեսը քաշած կաթը կամաց-կամաց ալյուրի հետ խառնած մաքուր գոլ ջրի յեն փոխում, ուրիշ խոսքով յերեսը քաշած կաթը տալիս են ջրի և ալյուրի հետ խառնած: Ալյուրը առանձին ել կարելի յե տար ցանաք, մենակ միքիչ թրջած:

Եղալիսով յերկու ամսական հորթը որական կտանա 15 շիշ գոլ ջուր յերկու փունտ վարսակի ալյուրի հետ և բացի գրանից ել, ինչքան փոր քեֆը կուզի՝ խոտ: Թե վոր վարսակի ալյուր չլինի, կարելի յե դրա տեղը տալ գարու ալյուր, քուսպ, կամ յեղփակտացորենի ալյուր: Իսկ ավելի լավ ե, եդ բոլոր կերերից հավասար չափով վերցընել, խառնուրդ անել և ենակես տալ:

Յերրորդ ամսիցը կարելի յե սկսել հորթին չոր կերի փոխել, բայց ելի չպետք ե մոռանալ վարսակի ալյուրը, փորից պետք ե տալ որական 2—3—4 փունտ, նայած թե հորթը ինչ մեծություն ունի, և թե անտեսության մեջ ինչքան ալյուրի պաշար կա: Վարսակի ալյուրը պետք ե տալ գարմանի հետ խառը:

Շատ ոգտակար ե հորթին որական կես գգալ ծեծած կավիճ կամ ալբած ու փոշի գարձրած վոսկը և միքիչ ել աղ տալ: Կավճից ու վոսկի փոշուց վոսկրները ավելի լավ կզարդանան ու կամրանան, իսկ աղը ընդհանրապես ամբողջ մարմնին ոգուտ ե:

Միքանի կարենը նկատողություններ ել հորթերի վրա խնամք տանելու մասին:

Ինչքան նսարավոր, ե հորթերին կերակրեք մեն որ միենանուն ժամերին:

Թուղ միք տա, վոր հորթը մոր կուրծքը ծծի:

Հորթի բերանը ձեր մատներով ուտելիք միք
դնի: Յեթե առանց դրան հորթը վատ է ուտում,
են ժամանակ մատներով տվեք, բայց միայն ա-
ռաջուց ձեռքերդ լավ լվացեք: Այնուամենայնիվ
աշխատեցեք սովորցնել հորթին ուտել առանց ձեր
մատների ոգնություն:

Վոչ մի ժամանակ չի կարելի հորթին կեղտոտ
ամանի մեջ կեր տալ: Ամեն որ յեռացրած ջրով
ամանը վողողեք: Շատ շուտ-շուտ հորթերը հի-
վանդանում են հենց նրանից, վոր կեղտոտ ա-
մանով ուտելիք եք տալիս նրանց:

Ամեն մի ուտել-խմելուց հետո հորթի դնչիկը
սրբիչով կամ մաքուր շորով սրբեք, թե չե կա-
րող են դնչիկի վրա մազեր բռւսնել կամ խոցեր
առաջ դալ:

Հորթերին պաշտպանեցեք յերկու կողմից փշող
քամուց և սառնամանիքներից: Բայց հանդարտ,
վոչ ենքան ցուրտ յեղանակին հորթերին անպատ-
ճառ բաց թողեք, վոր ման դան: Դրանից նրանք
ավելի լավ կզարդանան, կերածը կանոնավոր
կմարսեն, տվածդ կերն ել մի բանի ոգուտ կլի-
նի: Են ժամանակ պետք է բաց թողնել ման
դալու, յերբ հորթը արդեն բավական սինդացած
կլինի, մոտավորապես յերկրորդ ամսվանից վոչ
շուտ:

Ահա բոլորը: Դժվար չեն, բայց հորթի վրա

խնամք տանելու համար շատ կարևոր կանոններ
են:

Ուշադիր կերպով կարգացեք և ինքներդ կա-
սեք, վոր եստեղ մի առանձին դժվար բան չկա:
խակ յեթե հորթին հենց ծնվելու որից փորձեք
կանոնավոր մեծացնել, են ժամանակ դրանով
նրան պահպանած կլինեք շատ հիվանդություն-
ներից և ժամանակին կունենաք մի լավ արջառ
կամ կով:



«Ազգային գրադարան»
NL0289953

21-624



Figure 10. 400.